քանդակուած վիշապազանց արձանները, որոնք տարածուած են ինչպէս Նայիրի երկրի կենդրոնում, Մասիսի, Արագածի եւ Սեւանի լճի հարաւ-արեւմտեան լեռներում, սրանց ճահիճների եւ լճակների շուրջը, ջրանցքների ակունքում, նոյնպէս Ճորոխի Աւազանում: 5—7 մետր երկարութեամբ եւ 07—1 մետր տրամագծով ողորկուած եւ յղկուած արձանները, նրանց քանդակները չէր կարելի կատարել առանց պողպատի կռանի, մուրճի, սեպի, սանրի եւ դրի: Հետեւաբար երկաթը ունեցել են, որ այդ արձանները կարողացել են կերտել եւ պաշտել: Նայիրի երկրի վիշապազանց-ջրապաշտական շրջանը Ակկատների եւ Էլամի ջրանցքների կառուցման շրջանից ուշ չի սկսուած, եթէ միաժամանակ չէ· անշուշտ միեւնոյն դարում պիտի լինի, երբ մարդկային առաջադիմութեան, զարգացման միակ ուղին երկրամշակութիւնն էր եւ հողին կեանք պարգեւողը ջուրն ու արեւն էին: Վիշապազանց արձանները կենդանի վկայ են, որ ջրանցքները շինուել են իրենց գոյութեան դարում եւ այդ — շրջանը Ակկատների ջրանցքների շինութեան շրջանի հետ զուգընթաց է:

Ինչպէս Ճորոխի Աւազանի, նոյնպէս Բարձր Հայքի, Տարուբերանի, Այրարատի եւ Սիւնիքի ամէն մի անկիւնում մինչեւ օրս